Գ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 9 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1900 — ԹԻՒ 276

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տոլ.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Ուանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքից աւելի անգամներու համար 20 0|0 զեղչ կըլլայ։
Պուլկարիոյ համար ձեռքի
)(15 ՍԱՆԹԻՄ)(
Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ
Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиевъ

Նամակ եւ դրամ ղրկել
Խմբագրութեանս հասցէին
—
Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна
Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)
—
Գրութիւնք եւ չեն տրուիր
Արտասահմանի համար ձեռքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՁԻ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Շարժումի տարեշրջանին 10րդ ամիսն է որ կը լրանայ, ու դեռ բազմաթիւ բաժանորդներ սանդիմ չը իսկ չեն բարեհաճած վճարելու։ Այդ բաժանորդները արդարանալու ոչ մէկ միջոց ունին, որովհետեւ իրենց յօժարութեամբ են ստացած։

Խմբագիր մը պարտաւոր չէ ամէն ժամանակ իր բաժանորդներուն յիշեցնելու իրենց պարտքը։ Քանի որ թերթը կը ստանան պէտք է որ իրենց բաժնեգինն ալ վճարեն։ Պարտաճանաչութեան ամենատարրական գիտակցութիւնը ունեցող անձը կը զգայ թէ՝ թերթը կանխիկ ծախքեր ունի, զոր հայթայթելու համար, միակ աղբիւրը բաժնեգիններն են։ Անտարբերներու հանդէպ վարուելու կերպը գիտենք, բայց դեռ քիչ մըն ալ կը սպասենք, յուսալով որ, այլեւս բաժանորդները պիտի ըմբռնեն խմբագրութեանս դրամի ստիպողական պէտքը, քանի որ հիմայ թուրքերէն յաւելուած հանելու համար, արդէն հարկադրուած ենք նոր ծախքերու մէջ մտնել։

Իսկ նոր բաժանորդ գրուողներուն համար միանգամ ընդ միշտ կը յայտարարենք թէ, պէտք է իրենց հաստիին հետ թերթին բաժնեգինն ալ ղրկեն, առանց որուն թերթը չուղարկուիր։

ՄԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

Տիկին Քանանեան 40 հազար ռուբլի է նուիրել Սպահանի հայ գիւղերում դպրոցներ բանալու համար, իսկ Խորէն Ստեփանէն 25 հազար ռուբլի է կտակել հայ ազգին. միայն թէ խեղճ հայ ազգը 130 տարի յետոյ իրաւունք ունի Ստեփանէի կտակած գումարից գոյացած միլիոնները վայելելու...

Հիմա, Քանանեանի 40000 ռուբլիներով դպրոցներ պէտք է բացվեն այնպիսի տեղերում, ուր մտաւոր խաւարը, մարդու և ժողովրդների ամենամեծ թըշնամին, կատարելապէս թագաւորում է. Քանանեանի դպրոցները հիմնվում են այդ խաւարը փարատելու, հալածելու համար և անշուշտ 130 տարուայ ընթացքում այնքան կը յեղաշրջեն Սպահանի հայ գիւղացիներին, որ նրանք իրենց լուսաւորելու համար գուցէ անհատ բարերարների կարիքը չզգան ապագայում։ Ի հարկէ եթէ այդ բացվելիք դպրոցները դրսական, հաստատուն հիմերի վրա դրվեն և համապատասխան լինեն ժամանակի պահանջներին, ու որեւէ պատահարների չը հանդիպեն դար ու կիսուայ մէջ։

Գալով Խորէն Ստեփանէի 25 հազարին, որ 130 տարուայ մէջ մի խոշոր գումար պէտք է դառնայ, կարող է պատահել որ ոչ մի զգալի և նշանակելի օգտակարութիւն ունենայ հայ ժողովրդի համար, որովհետեւ, այդ ահագին ժամանակամիջոցում, հայը կարող է իբր առանձին ժողովուրդ կամ գոյութիւն չունենալ, կամ մի այնպիսի լաւ վիճակ ունենալ որ զանազան ազգասէրների թողած գումարները այնքան կարեւորութիւն չեն ունենալ, մանաւանդ եթէ ապագայ մաքուր սերունդը հասկցաւ թէ, այդ խոշոր նուէրը գոյացել է այնպիսի մի գումարից, որը բաժին է եղել իրենց լաւ վիճակը ստեղծող անձի, մերկ և արիւնլայ պապերի ու հայրերի։

Կարող է նոյնպէս պատահել որ այդ գումարը բոլորովին կորչի զանազան պատահարների պատճառով, ինչպէս կորել են Հնդկաստանի մէջ կտակված գումարները։

* * *

Այս նուէրը և կտակը համեմատելով միմեանց հետ, միտքս ընկաւ այս գրական առածը։

«Աւելի լաւ է ձեռքիս մէջ մի ճնճղուկ ունենամ, քան թէ երկնքում կռունկ»։

Եւ այդ երկնքի կռունկը հայ ժողովրդին իր կտակով խոստանում է Խորէն Ստեփանէ գիտնական, զարգացած, մանկավարժ, հրապարակախօս, հրապարակագիր, եպիսկոպոս Հոգեւորականը, որը 40 տարի շարունակ գործել է հայ ժողովրդի մէջ, հասարակական գործիչի ամեն դերում, լաւ ծանօթ էր հայ ժողովրդի անթիւ և անհամար ցաւերի հետ և թէ գործնականապէս թէ բարոյապէս միշտ նպաստել էր այդ ցաւերը ամոքելու գործին։ Քարասիրտ հարստաների սիրտը կակղացնող և հայոց դպրոցների համար հարիւր հազարներով ռուբլիներ հանգանակող Խորէնը, որ քար սիրտերը հալեցնում էր միայն իր անկեղծութեամբ պակասութիւններ ձաղկող քարոզներով, իր մահից յետոյ՝ թողնում է մեզ համար իրեն վերաբերմամբ բոլորովին անհատատալի մի գումար, որը նա կարողացել դիզել այնպիսի մի ժամանակ, երբ ամեն կողմից հայը հայ, զգեստ է աղաղակում. և մեռնելուց յետոյ էլ, փոխանակ այդ գումարը իսկոյնտալու իր եղբայր մերկերին և անօթիներին կամ թէ մի աւելի վսեմ գործի, իր այդ պարտականութիւնը դար ու կէս էլ յետաձգում է։

Ասում են մեռածի մասին կամ պէտք է լռել, կամ թէ պէտք է միայն լաւ խօսել։ Զէ, պէտք է խօսել. մանաւանդ եթէ մեռնողը հասարակական գործիչ է, հելինակաւոր է և կարող է նոյնիսկ իր վերջին քայլով օրինակ դառնալ ժողովրդական այն տարրերին, որոնք ամեն մի քայլում հեղինակաւոր ուրիշին են հետեւում։ Պէտք է խօսել և քննադատել միայն իբր հասարակական մարդի՝ առանց նրա անհատական կեանքը խծբծելու։

Մենք այսօր խղճի ամենայն հանգարտութեամբ դատապարտում ենք Խորէն Ստեփանէի այդ վերջին քայլը, որով նա մեզնից բաժանվեց։

Մեր աչքում այսօր, այս վայրկեանին մի հայ որբին 5 ֆրանք տուողը, մի չքաւոր աշակերտին մի գիրք նուիրողը, մի հայ կարիչին մի հրացան պարգեւողը աւելի մեծ Հայրենասէր է, քան Խորէն Ստեփանէն դար ու կէսից յետոյ իր տասնեակ միլիոն ֆրանկներովը։ Նոյնիսկ եթէ այդ գումարը հայերին ՏԱՅ։

ՎԱՐԴՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 1 Դեկտեմբեր

(Շար. նախորդ թիւին եւ վերջ)

Թուականէս տասն օրի մը չափ առաջ Եըլտըզի մէջ նախարարներու ժողով կար կարմիր Սուլթանի նախագահութիւնով։

Ժողովը խիստ ալեկոծ է եղեր։ Խորհուրդի առարկան Մակեդոնացիներն էին։ Սէլանիքի, Քոսովայի և Մանասթիրի վալիները ղրկած են խիստ անհանգստացնող տեղեկագրեր։ Մակեդոնական կոմիթէները նորէն իրենց շարժումները սկսեր են։ Ատ բաւական չէ, յունական «էտնիքէ հէթերիան» ալ սկսեր է կեանքի նշաններ ցուցնել. վէնքեր կը ղրկէ Մակեդոնիա, խումբեր կը հանէ Եանեայի կողմերը։

Կառավարութիւնին գիտում ըրաւ յոյներուն. պատասխան առաւ որ, յոյն կառավարութիւնը երբէք վէնք չէ ղրկեր և ատ տեսակ մրցոցներու դէմ է, իբր թուրքերու մտերիմ բարեկամ։

Ատկէ ուրիշ և աւելի ալ ինչ պատասխան կուզէիք։

Նախարարական խորհուրդի երկրորդ նիւթն էր Կրէտէի խընդիրը։ Անիրաւ Բրէնս Եորկիոսը հանգիստ չի կենար։ Թափառական ասպետի մը պէս ընկեր է Եւրոպական արքունիքները և կը յայտարէ թէ իր ընտրուելուն երեք տարին լրացեր է և եթէ ժողովուրդը նորէն զինքը ընտրէ, չի պիտի համաձայնի. թէ իր, թէ կրետացիի կամքն է մայր Յունաստանի հետ միանալ։ Կըսուի թէ պետութիւնները լռելեայն համաձայնած են։

Ի հարկէ, ընթերցող, համիտի շատ ալ հոգը չէր ըլլար թէ Կրէ-

տէն ի՞նչ կըլլայ, եթէ տարբեր գաղան մը իր ժանիքները Համիտի հիւանդ ուղեղին մէջ չը ցուցնէր։ Համիտ կը մտածէ. Կրէտէն ձեռքէս ելած է... գլուխը քարին... բայց եթէ Ցունաստանի հետ միանայ, յունական բանակը այլեւս 6—70,000 չըլլար, առնուազն 50,000 մըն ալ կաւելնայ և ան ալ կրետացիներու պէս սքանչելի կռուող ու դիմացկուն ժողովուրդ մը։ Է՞, կը մտածէ Համիտ, երբ յունական բանակը միայն 70,000 էր, ես զայն յաղթելու համար, 300,000 զօրք հանեցի, իսկ եթէ անոր թիւը 120,000ի հանի ան ատեն որչա՞փ զօրք պիտի հանեմ անոնց դէմ. չէ՞ որ յոյներն ալ աչք ունին Մակեդոնիոյ մէկ մասին վրայ։ Իշտէ աս անիրաւ միտքն է Համիտեան ճահիճը ալեկոծողը և թուրք համալ-նախարարներու եղային ճակատները քիչ մը կնճռոտողը։

* *

Երէկ նոյեմբեր 30ին կայսերական նոր իրատէ մը եւ բերեցաւ, որ Ռուսիայէն Թուրքիա գաղթել ուզող 60,000 մահմետականներուն թոյլատրել կը բարեհաճի գալ Թուրքիոյ մէջ բնակութիւն հաստատելու։

Այդ գաղթականներու հաստատման և ճամբու ծախքերը պիտի հոգայ պետական գանձարանը, ու աս 60,000նոց գաղանացած մահմետական նոր ու մուրացիկ տարրը, ստանալով աղուոր հրացաններ, բազմաթիւ փամփուշտներ՝ պիտի երթան լեցուին անդէն հայերու գաւառները, խլեն անոնց բերնի վերջին պատառը, վերջին ցնցոտին, վերջին անտու

ու նոյն իսկ մերկ մնացած պատերը...

Թշուառութի՞ւն, յուսահատական թշուառութի՞ւն։

ԲԱԺ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակոյ», մասնաւորապէս «Մուրճ» ամսաթերթը յառաջիկայ Ցունուարէն սկսած կտրեւոր փոփոխութիւններու պիտի ենթարկուին։ «Մշակոյ», որ ասկէ 4—5 տարի առաջ շաբաթը երեք անգամ կը հրատարակուէր և անկից մինչև հիմա հինգ անգամ, յաջողած է տեղական կառավարութենէն արտօնութիւն ձեռք բերել շաբաթը վեց անգամ հրատարակուելու նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով։

Իսկ «Մուրճ»ը, յառաջիկայ Ցունուարէն պիտի հրատարակուի բոլորովին նոր կազմով։ «Մուրճ»ի խմբագրութեան անդամները են՝ Պ. Պ. Լեւոն Սարգսեանց և Լէօ. երկուքն ալ ծանօթ «Մշակոյ» մէջ։ Հրատարակիչ և ժամանակաւոր խմբագիրն է Կոստանդին Կրասիլնիկեանց։

* «Մշակոյ» կը հաղորդէ.

«Լրագիրները տեղեկացնում են, որ ասորիների հոգեւոր պետ Մար-Շիմոնի և քրդական Շէյխերի մէջ կայացել է հաշտութեան պայման, որով նրանք պարտաւորվում են ապրել համերաշխութեամբ իբրև հարեւաններ և չը գործել միմեանց վրայ յարձակումներ, որոնցից ցաւում էին երկու կողմերն էլ։ Այդ հաշտութիւնը գոհութիւն է պատճառել թէ տեղական վարչութեան և թէ Վանի Ռուսաց ու Եւրոպական հիւպատոսներին»։

* Խորէն Եպիսկոպոս Ստեփանէ կարճատեւ բայց ծանր հիւանդութենէ մը վերջ, Նոյեմբեր 14ին, առաւօտեան ժամը 3ին (Ը. Ե.). վախճաներ է իր 60 տարեկան հասակին մէջ։ «Մշակոյ» 216—221 թիւերուն մէջ որոնք մեր ձեռքը կը գտնուին կենսագրութեան ընդարձակ տեղ յատկացուցած են։ Ստկից պատ Ռուսիոյ ամէն կողմէն ցաւակցական հեռագիրներ կը հասնին օրը օրին։

Ահա՝ իր կենսագրութեան համառոտութիւնը Մշակէն առնելով. «Խորէն Եպիսկոպոս Ստեփանէ ծնվել է 1840ի. ստացել է ուսում առաջ Թիֆլիսի Ներսէսեան դպրոցում, յետոյ Լազարեան ճեմարանում և աւարտել ուսումը Մոսկվայի համալսարանի լեկուագիտական Ֆակուլտէտում, ստանալով կանդիդատի կոչում։ Աւարտելով ուսումը նա մտաւ ուսուցչական ասպարէզի մէջ և ապա նուիրեց իրան գրական գործունէութեան հրատարեկելով «Հայկական Աշխարհ» ամսագիրը։ 1871 թուին նա ընդունեց հոգեւորական կոչումը իսկ 1894ին ձեռնադրվեց Եպիսկոպոս։ Իբրև Վարդապետ և Եպիսկոպոս նա եղել է քարոզիչ թեմական տեսուչ, տեսուչ հոգեւոր դպրոցի, ուսուցիչ Գէորգեան ճեմարանում, առաջնորդ, խմբագիր «Լրարար» ամսագրի աշխատակից Երբեմնի «Հիւսիսափայլի» թարգման և դիւանապետ Կաթողիկոսի։ Նա թողել է մի կտակ, գրված 1899 ի. Ցունիսի 5ին «Մշակոյ» խմբագրութեան անունով։ Հանգուցեալի եղբայրը յանձնեց երեկ այդ կտակը «Մշակոյ» խմբագրին, որը բացվեց ազգականների և բարեկամների առաջ։ Այդ կտակով նա թողում է 25,000 ռուբլի փող այն պայմանով, որ այդ գումարը չահեցնվի 130 տարվայ ընթացքում և ապա, երբ կը դառնայ 14 միլիոն, կործադրվի զանազան բարեգործական և ազգային հիմնարկութիւններ հաստատելու։

* Էջմիածնէն «Մշակոյ» կը գրեն. «Հրաժարվեց պաշտօնից ապարանական վարչութեան նախագահ Աշոտ վարդապետը, որի տեղը դեռ ոչ ոք չէ նշանակուած փոխվելու են Վանական կառավարութեան անդամները, բայց թէ որո՞նք կը նշանակվին, յայտնի չէ դեռ։

* Նոյն թերթին նորէն Էջմիածնէն կը գրեն. «Հաստատապէս տեղեկացանք, որ Սինոդի նոր անդամներ են առաջարկված Մխիթար, Կորիւն, և Սիրայր վարդապետները»։

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

«Բազմավէպ»ի դեկ. համարը ճոխ ու չահեկան բովանդակութիւն մը ունի։ Խմբագրականը «Հայ-Հռովմէական գրականութիւն» վերնագրով, ընդհանուր տեսութիւն մըն է այդ գրականութեան վրայ, ուր մի առ մի կը յիշուին այն գրագէտները զորս ցարդ ունեցած է հայ-հռովմէական հասարակութիւնը։

Ցօդուածագիրը, հայր Երեմեան, կը յայտնէ թէ՝ հայութեան այս դասակարգը հին ատեն աւելի եռանդով ու արդեամբ աշխատած է սատարելու ազգային գրականութեան քան թէ ներկային մէջ։ Վարդան փաշա, Հէսարեան, Պէշիկթաշլեան, Հէքիմեան, Ծերենց (Շիրմանեան), ու անոնցմէ աւելի առաջ Բէստէն, Օղուլլուխեան, հին փառքերը կը կազմեն այս գրականութեան, որ չուտով մարեցաւ, եւ չի կրցաւ այլեւս վերակենդանանալ, որովհետեւ անոնց յաջորդող գրագէտներ չի ծնան։ Օղուլլուխեան եւ Բէստէն իրենց ժամանակին նշանաւոր գիտուն բժիշկները եղած են, Եւրոպա ուսած, որոնք կապրէին ներկայ դարուն սկիզբները։ Առաջինը գրած է «Նիւթ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԱՆԱԾ ԹՌՉՆԻԿ

—✕✕—

IV.

Թռչնիկի հետ ունեցածս վերջին տեսութիւնից անցել էր մօտաւոր։ Այդ տասը օրը շատ զբաղված էի եւ միշտ յեղափոխական բարեկամներիս շրջանում. բայց իմ մէջ էլ առաջւայ հաւատը, վստահութիւնը չը կար դէպի նրանցից շատերը. նրանց ամէն մի խօսքը եւ նախադասութիւնը, որոնք վերաբերում էին հայրենիքի ազատութեան, յեղափոխութեան, եւ ուրիշ հանրամարդկային լայն գաղափարների ու ձգտումների, ինձ անհագին տանջանք էին պատճառում, որովհետեւ ստիպված էի լինում խօսողների դէմքերի աչքերի արտայայտութիւններին հետեւել եւ նոյն միջոցին իմ մտքում վերլուծել, քննադատել։ Վարանած Թռչնիկը հասել էր իր նպատակին. կասկածը զարթել էր իմ մէջ եւ ես չէի կարողանում որոշում տալ թէ ինչ ընթացք պէտք է բռնեմ, որ իսկապէս իմ պարտականութիւնս կատարած լինեմ թէ դէպի գործը եւ թէ դէպի հայրենիքը։

Մօտիկ բարեկամներիցս մի քանիսը նշմարում էին իմ մէջ կատարված այդ փոփոխութիւնը եւ նկատում.

— Սուրէն, էլ չես ոգեւորվո՞ւմ, էլ ոչ մի տեղ գնալու բաղձանք չես յայտնում։ Ի՞նչ պատահեց քեզ հետ.

— Ոչի՛նչ, պատասխանում էի։

Իմ կասկածները աւելի շատացան, երբ պարզ կերպով նկատեցի թէ մի քանի քարոզիչներ երբէք հաստատ տրամադրութիւն չեն ցոյց տալիս որ եւ է վտանգաւոր վայր գնալ, այլ միշտ ուրիշ կանդիտաներ են փնտռում, ուրիշներին են առաջարկում։ Այդ բաւական չէ, այլ եւ իրենց ապրած վայրերում գործում են շատ թոյլ կերպով, առանց եռանդի, առանց ոգեւորվելու. իսկ երբ նկատում ես թէ եռանդով չեն գործում, պատասխանում են.

—Բուն երկրում, տեղում գործ չը կայ, գործիչներ չունենք, գրամ չունենք, ի՞նչով ոգեւորվենք։

Մտքովս անցում էր ասել.

— Գնացէք, գործեցէք. չէ՞ որ դուք էլ յեղափոխականներ էք։

Բայց չէի ասում, որովհետեւ իսկոյն պատասխան կստանայի.

— Մենք պատրաստ ենք գնալու, բայց այստեղի ընկերները չեն թողում. այստեղ գործը կը փչանայ։

Եւ եթէ կրկնէի թէ՝ հապա այստեղ ի՞նչի չէք գործում. կրկին կը պատասխանէին.

— Երկրում գործ չը կայ, որ ժողովուրդը ոգեւորվի եւ մեզ աջակցի։

Ու այդ բոլոր յեղափոխական սոփեստութիւնները տեսնելով, առջեւս պատկերանում էր Վարանած Թռչնիկը իր տժգոյն, մեռելացած դէմքով, բայց սեւ թափանցիկ աչքերով եւ իր ցամաքած շրթունքները կամացուկ շարժելով.

—Մի քանիսի մէջ անկեղծութիւնը պակասում է։ պէտք է վերապահութեամբ վերաբերվել։

Կրկին ուզում էի գնալ մօտը, բայց վերջին տեսակցութիւնը ինձ այնքան յուզել էր եւ կասկածը՝ թէ ես Թռչնիկին այն օրը ձանձրացրի, այնքան կաշկանդել որ չէի համարձակվում կրկին այցելել։ Բայց գնալ պէտք էր, որովհետեւ որոշել էի առ այժմ յեղափոխական ոչ մի գործ յանձն չառնել եւ գնալ իմ պաշտօնատեղին։ Հարկաւոր էր հրաժեշտի ողջոյն տալ։

Այդ վարանումի մէջ էի, երբ յանկարծ սենեակիս դուռը բացվեց եւ ներս մտաւ Թռչնիկի աշակերտներից մին, Թռչնիկի տոմսակը յանձնեց, որով նա ինձ իր մօտ էր կանչում։

Տոմսակը ստանալու պէս իսկոյն ճամբս ընկայ Թռչնիկի մօտ. այդ տոմսակը ինձ մեծ ուրախութիւն պատճառեց, որովհետեւ համոզվեցի թէ Թռչնիկին չէի ձանձրացրել եւ իմ այցելութիւններս ծանր չէին նրա համար։

Ճանապարհին տոմսակը բերող պատանուն հարցրի թէ այդ քանի օրը Թռչնիկի առողջութիւնը ի՞նչպէս էր.

— Միեւնոյնը, պատասխանեց պատանին. շատ է զբաղվում, շարունակ գրում է, հանգիստ չի մնում որ մի քիչ կազդուրվի։

Շարունակ յուզումների մէջ է. մանաւանդ այս վերջին օրերում։

բժշկական» անուն գիրք մը, աշխարհաբառ կոկիկ ոճով, ուր դեղօրէից մասին կարեւոր ծանօթութիւններ կուտայ, անոնց Հայ. Լատ. եւ Թուրք. անուններով միասին։ Իսկ Րէստէն դեռ դար մը առաջ ուզած է ընել. ինչ որ մինչեւ այսօր չեն յաջողիր հայ գրագէտները. այսինքն Հայ լեզուն գիտութեան հետ հաշտեցնել։ Այդ փորձը ըրած է Րէստէն երկհատոր «Բժշկարան»ներուն մէջ։ Րէստէն ժամանակին շատ կարեւոր գիրք մը գրաւած է, եւ մինչեւ իսկ Եգիպտոսի Խեդիվին պալատական բժիշկը եղած է։

Հիսարեան հայ հոովմէական հասարակութեան ամենէն սաղանդաւոր դէմքերէն մին եղած է. իբր խմբագիր մեծ անուն ունեցած է եւ վարած ե «Բանասէր»ը, ինչպէս նաեւ «Ժուրնալ Աղիադիք»ի խմբագրութեան պաշտօնը։

Յետոյ, յօդուածագիրը ընդարձակօրէն կը խօսի Պէշիկթաշլեանի վրայ։ Սակայն մեր կարծիքով Պէշիկթաշլեան, աւելի հետեւող տաղանդ մը եղած է, քան թէ ստեղծողու ինքնատիպ հանճար մը։

Իրաւ է թէ, իր ժամանակին մեծ ազդեցութիւն ունեցած է հասարակութեան վրայ իր անուշ ու գեղեցիկ բանաստեղծութիւններով, իր յուզիչ ու քաղցրալուր երգերով, իր «Եղբայր ենք մենք»ով, որ կրօնական վէճերու այն փոթորկայոյզ շրջաններուն, միութեան ամենէն գողտր ու միանգամայն ամենէն ազդու հրաւէրն էր, տաք գլուխ կրօնամոլներուն ուղղուած։ Իսկ Հէքիմեան աւելի ծանր միտք մըն է, ու թէեւ շատ նիւթեր ունի գրած, բայց ընտիր կտորները խիստ հազուագէպ են։ Հէքիմեան աւելի թատրերգութեանց ուժ տուած է. բայց իր թատրերգութիւններն ալ ուզակի ազդուած են այն ժամանակուան ռոմանտիկ թատրերգութենէն, շատ անգամ խիստ յոռի կերպով։

Յօդուածագիրը իր գրութեան վերջը ցաւ կը յայտնէ թէ՝ հայ հոովմէական գրագէտներու այս շարքը հիմայ այլեւս ընդհատուած է։ Պէշիկթաշլեանի մը յաջորդը չերեւար ներկայ հայ հոովմէական սերունդի մէջ։ Թերեւս անոր համար որ, իրենց նախկին սերունդը աւելի մօտ կապեր ունէր հայ ցեղին հետ, աւելի կը հետաքրքրուէր անոր ճակատագրով, քան իրենց արդի սերունդը, որ, կերեւայ, ժամանակին հետ թուլցած է ու տրամադրութիւն չունի իր ազգով հետաքրքրուելու։ Արդէն նորագոյն հայկական շարժումներու մէջ հայ կաթոլիկ հասարակութիւնը հաստատեց այդ իրողութիւնը իր շատ թոյլ մասնակցութեամբ եւ յաճախ նոյնիսկ իր անտարբեր ու թշնամական ընթացքով։

«Բազմավէպ»ի այս թուին կարեւոր յօդուածներէն մէկն է նաեւ «Տեղագրական» ուսումնասիրութիւնը «Բագարանի» եւ «Բագաւանի» վրայ, պատմական, նկարագրական եւ հնախօսական նորութիւններով։

Նոյն հանդէսէն կը տեղեկանանք թէ՝ Հոոմ հրատարակուող «Նուովա Անթոլոկիա» հանդէսին մէջ, յօդուածագիր մը «Պոլսէն դէպի Կովկաս» ճամբորդութեան մը նկարագիրը ընելով՝ շատ աննպաստ տեղեկութիւններ կը հաղորդէ Հայոցս մասին ամենասխալ աղբիւրներու վրայ հիմնուելով, ինչ որ շատ պատիւ չի բերեր իր հեղինակին։ Ոչ ոք այդ յօդուածագրէն գովասանք կը սպասէր հայոցս մասին, բայց երբեք ատանկ անիրաւ վարմունք մը եւ ողորմելի նկարագիր մըն ալ չէինք սպասեր։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Անցեալ ուրբաթ օրուան Խառն Ժողովոյ նիստին մէջ, Կիլիկիոյ կաթողիկոսութեան ընտրութեան եղանակին վրայ կատարեալ համաձայնութիւն գոյանալով, որոշուած է ընտրութիւնը կատարել ըստ այդ համաձայնութեան։

— Բարսեղ Օթամպօլլուեան որ Սամաթիոյ Եէնի-Մահալլէի եկեղեցւոյն վերաշինութեան գործին վերակացու կանգնած էր, սիրով յօժարիր է իր անձնականէն նուիրել պարտք մնացած 1705 ոսկին։ Խառն Ժողովը տնօրինած է որ նուիրատուին անունը քանդակուի յիշեալ եկեղեցւոյ ճակատը և շրջափակին մէջ դամբանի տեղ որոշուի։

Եկեղեցւոյն վերաշինութեան բոլոր ծախքն եղած է 2443 ոսկի և միայն 698 ոսկին ժողովրդական հանգանակութեամբ վճարուած է։

— Մոսկուայի մէջ ապրող քանի մը ազգայիններ որոշեր են գրական ու գեղարուեստական ընդարձակ հանդէս մը հրատարակել հայերէն լեզուաւ և արդիւնքը յատկացնել Զանշեանցի հիմնած հայ որբանոցներուն։

— Հնդկաստանի և Պարսկաստանի առաջնորդ ընտրուեր է Սահակ եպիսկոպոս Այվատեան, իսկ Դավրէժի առաջնորդութիւնը յանձնուեր է Մուրատեան Եղիշէ վարդապետին։

Երկուքն ալ իբր հոգեւորականներ գործունեայ մարդիկ են և կարող են օգտակար ըլլալ իրենց ժողովրդին։

— Պաքուի մէջ մօտերս վախճանած է Շամախեցի Մարգարեան և 5000 ոսկի կտակեր է հայոց մարդասիրական ընկերութեան. 3000 Շամախիի եկեղեցւոյն, 7000 նոյն քաղաքի հիւանդներուն. 3000ական Էջմիածնի և Երուսաղէմի վանքերուն, 4000 քաղաքային վարչութեան, տոկոսովը չքաւոր աշակերտներ պահելու համար։

— Եգիպտոսի նորընտիր առաջնորդ Յովսէփ եպիսկոպոս Այվազեան Ռոտոստոէն Պոլիս եկած է և մօտ օրերս Եգիպտոս պիտի ուղեւորի։

— Ֆիլիպէէն կը գրեն մեզ.

Արսէն վարդապետի հանրածանօթ դատը անցեալ շաբթու վերաքննիչ ատեանին առջեւ տեղի ունեցաւ։ Այն վեց երիտասարդները որոնք նախադատ ատեանէն 1—2 ամիս բանտարկութեան դատապարտուած էին, այս անգամ բոլորովին անպարտ արձակուեցան և անգամ մը ալ արդարութիւնն ու անկեղծութիւնը յաղթանակ տարաւ զզուելի խաբեբայութեան դէմ։

Փաստաբան Պ. Թանչէվ, ազնիւ և գաղափարական երիտասարդ մը, որ առանց ոեւէ փոխարինութեան, լոկ գաղափարի սիրուն, իր վրայ առած էր այս դատը, ամենայն յաջողութեամբ պաշտպանեց իր ամբաստանեալները, ցատագովեց երիտասարդութեան այն անզուսպ եռանդը, ուրկէ մղուած այդ վեց անձերը ամէն վատանգ յանձն առած էին վատերը ջախջախելու գործին համար, որուն մէջ իրենք անձնապէս ոեւէ շահ մը չունէին, ու գոհունակութիւն յայտնեց թէ ինք ատանկ կտրիճներու պաշտպան հանդիսացած էր։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երկսեռ Որբանոցաւ Ընկերութեան Հայոց Վառնայի

—

Պատիւ ունինք յայտարարելու թէ, Տիկնանց ճիւղի Բ. Ընդհանուր Ժողովը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի դեկտեմբեր 10ին առաւօտեան ժամը 10ին, աղջկանց ազգային վարժարանի սրահին մէջ։

Օրակարգն է Գործադիր Ժողովոյ ընտրութիւն. ուստի կը խնդրենք ընկերութեան անդամներէն որ, բարեհաճին ներկայ գտնուիլ Ընդհանուր Ժողովին։

Վ. Ատենադպրուհի Ատենապետուհի
Պ. Յ. Բարսամեան Ս. Ազնաւորեան

Վառնա, 8 Դեկտեմբեր

Հաճեցէք յայտարարութիւնս հրատարակել Ձեր Պատ. թերթին մէջ կանխաւ ընդունելով մեր շնորհակալութիւնը։

——).(——

որովհետեւ ճեմարանից վտարված աշակերտներին Ներսէսեան դպրոցում ընդունելու համար դժուարութիւններ են հանում։

Յետոյ, այդպէս տկար լինելով հանդերձ, ամեն պէտք ինքն անձամբ է ուզում հոգալ, չի ուզում որ իրեն մի որ եւ է ծառայութիւն անենք։ Տարօրինակ մարդ. այս աշխարհի մարդ չէ, մանաւանդ հոգեւորական մարդ չէ։

— Ի հարկէ այցելողներ շատ կան, առարկեցի ես։

Այո, կան. բոլորն էլ գալիս են, չեն ուզում մենակ թողնել։

Այդպէս խօսելով մենք տուն հասանք. անցայ Թռչնիկի սենեակը։ Նա այսօր անկողնում չէր, այլ մաքուր հագնված, սեւ սաթի պէս, մի քիչ գանգուր մօրուքը սանրած, բաւական թարմ գէմքով շրջագայում էր սենեակի մէջ։ Այսօր աչքերը աւելի վառվռուն էին. առողջացող մարդի տպաւորութիւն էր թողում։ Հէնց որ նստս մտայ, իսկոյն դիմաւորեց հետեւեալ նկատողութիւնը անելով.

— Վշտացել եմ ձեզ դէմ, այսքանի օրը ինձ բոլորովին մոռացաք։ Ինչպէս երեւում է կամ ձանձրացաք, տաածներս հիւանդ մարդու զառանցանքների տեղ ընդունելով, եւ կամ չը հաւատացիք որ անկեղծօրէն յայտնեցի ձեզ յաճախել ինձ մօտ։

— Չէ, հայր սուրբ, պատասխանեցի, ոչ այս եւ ոչ այն։ Զուզեցի նախ ձեզ յաճախ այցելել, որովհետեւ միշտ ձեզ հետ յուզող խօսակցութեան ենք բռնվում, իսկ այդ ձեզ համար վնասակար է. երկրորդ որ պատրաստութիւններ էի տեսնում ճամբա ընկնելու դէպի իմ պաշտօնատեղին։

— Ինչպէ՞ս, ուրեմն մտադիր չէ՞ք որ եւ է յեղափոխական գործ յանձն առնել։

— Ոչ, առայժմ մտադիր չեմ։ Դեռ շատապողական գործ չը կայ. յետոյ, մեղքս ինչ թագցնեմ, ձեր ենթադրութիւնները իմ մէջ կասկած զարթեցրին, եւ մինչեւ որ այդ կասկածները չը փարատվեն, կամ թէ իսկապէս մի անհրաժեշտ պահանջ չը զգացվի գործի համար, տեղից շարժվելու չեմ։ Վախենում եմ շտապ որոշումս վերջը մեծ հիասթափումի պատճառ լինի։

— Դուք կարծեմ դեռ որոշ կերպով «հախ դինը» չէք ընդունել, այնպէս չէ՞։

— Այո, չընդունեցի, թէեւ ժողովներին մասնակց ում էի։ Չընդունեցի, որովհետեւ ինձ համար շատ խնդիրներ դեռ պարզ չէին։ Կասկածներ չունէի, միայն մի քանի կարեւոր խնդիրների մութ լինելն էր ինձ սարսափում առ այժմ հեռու մնալ. իսկ այսօր կասկածներն էլ կան։

— Էհ, վնաս չունի, այս ձմեռ այդպէս կանցնէք. ամառը կարող էք մի որոշում տալ, եթէ պէտքը զգացվի։

Նամակ գրեցէք, ես էլ եթէ կարողանամ կը պատասխանեմ, բայց դուք իմ ուշ պատասխանելուն կարեւորութիւն մի տաք. ես հիւանդ մարդ եմ, ներողամիտ եղէք դէպի ինձ։

Հա, այսօր Խ.էնց տունը երեկոյթ կայ։ Բոլոր գործիչները եւ գործիչուհիները այնտեղ են լինելու. ինձ էլ հրաւիրել են, բայց ես անկարող եմ, իհարկէ դուք կը գնաք։

— Թերեւս.

— Ի՞նչի թերեւս, անպատճառ գնացէք Ուրախութիւնների միջոցին մարդկանց աւելի լաւ կարելի է ճանաչել. մանաւանդ եթէ մի քիչ գինի լինի մէջ տեղը. մարդիկ այլ եւս անընդունակ են լինում իրենց ներքին մարդը թագցնել։

— Այդ մի կողմ, բայց դուք ի՞նչ էք անելու, հայր սուրբ, այստեղ պէտք է մնա՞ք

— Անշուշտ այստեղ. որովհետեւ առողջութիւնս շատ թոյլ է. թէեւ Էջմիածինը որոշել է հիւսիսային մի վանք աքսորել. բայց այս անգամ չեմ հնազանդելու։ Համբերութիւնս հատաւ. ինչ ուզում են թող անեն։ Կարծես դիտմամբ ինձ մեռնելու են ուղարկում այն սառնամանիքը։ Շատ «զահլա» տանեն, վերարկուս էլ կը հանեմ։

ՎԱՐԴՕ

(Շարունակելի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պաղատի մէջ, Սուլթանին հրամանաւ ջորիի վրայ հեծեալ ոստիկանաց վաշտ մը պիտի կազմուի։ Կուսակալին նախագահութեամբ յանձնաժողով մը ջորիները հասարակութենէն պիտի առնէ իբրև նուէր, և պիտի հայթայթէ ուրիշ պէտքերը։

—Հալէպի կուսակալութիւնը Կրօնական հասարակութեանց պետերուն ծանուցեր է թէ՝ նահանգին պետական վարժարանաց մէջ ոչ-մահմետականաց տղայք անխտիր պիտի ընդունուին ցերեկեայ ու գիշերօթիկ, ձրի ու թոշակաւոր։

—Դրամական անձկութեան պատճառաւ, Սուլթանը մասնաւոր յանձնախումբ մը կազմած է, բամազանի տօներու առթիւ պաշտօնեաներուն մէյմէկ ամսական տալու միջոցներու մասին խորհելու համար։

Միւս կողմէն Անգլիա կը պահանջէ, հայկական խռովութեանց ատեն անգլիական հպատակներու կրած վնասներու հատուցումը։

—Պոշտօնապէս կը հրատարակուի թէ՝ Պէտրհան Փաշա-Զատէ Ապտիւրրահման Պէյ ի բացակայութեան հրապարակաւ դատուելով մշտնջենաւոր բերդարգելութեան, քաղաքային իրաւունքներէ զրկման ու գոյքերու գրաւման դատապարտուեցաւ. որովհետև կրթական պաշտօնը թողլով՝ Եւրոպա փախած է, և այժմ Լոնտոն կը գտնուի, թուրքերէն ու քրդերէն վնասակար ու խռովայոյզ լրագիր մը՝ կը հրատարակէ և զրկման համար իրեն տրուած պայմանաժամին մէջ վերադարձած չէ։

—Վանի հարաւակողմը գտնուող պօհտանցիներու մեծ աշիրէթի Սօր (կարմիր) անուն ցեղապետը, երկու հազար մարդով, յարձակեցաւ Մամխոռանցիներու ցեղին վրայ։ Այդ պատճառով Գրաւցի աւազակ Շաքիրի ցեղը, Ալանցի, Եզդենանցի եւայլն ցեղերը միանալով անոնց դէմ ելան։ Արիւնահեղութիւնն անխուսափելի էր, բայց Փեսանդաղտի ծանօթ Շէյխը միջամտելով հաշտեցուց, որոնք իրենց տեղերը դարձան։ Յարձակումին ատեն աւազակապետ Շաքիրի հայրը Շատախու գայմագամին դիմեց՝ կառավարական միջամտութիւնը խնդրելով։ Բայց գայմագամ պէյը պատասխանեց. «Թո՛ղ այդ շունները զիրար բզկտեն քիչ մը. մենք չենք խառնուիր»։ Ճիշդ միեւնոյն կերպով պատասխանեց տեղիս կուսակալն ալ, որուն դիմուած էր միջամտելու համար»։

ՌՈՒՄԱՆԻԱ

Ամբողջ Ռումանական մամուլը խիստ դժգոհ մնացած է պուլկարական նորակազմ նախարարութենէն, որովհետև կը կարծէ թէ արդի նախարարութիւնը Մակեդոնական կոմիթէին և անոր յեղափոխական ձգտումներուն աւելի ներողամիտ աչքով պիտի նայի։ Բազմաթիւ Ռումանական թերթեր, և մասնաւորապէս «Ատէվէրուլ» և «Աբառէա Նաձիոնալա» կուզեն որ ռուման կառավարութիւնը Պուլկարիայէն Մակեդոնիթիին լուծումը պահանջէ. «Ռումանիան, կըսէ «Ատէվէրուլ», որ իր արիւնով Պուլկարական պետութիւնը կազմեց, չի կրնար ներել որ անիկայ մեծնալով վտանգաւոր դրացի մը դառնայ»։

ՉԻՆԱՍՏԱՆ

Լոնտոնէն կը հեռագրեն թէ Բէքինի կառավարիչ անուանուեր է Թօքիօի չինական դեսպան Լիշանկթօ։

—Գերմանական գնդապետ մը Զանկի մէջ զէնքի ու ռազմամթերքի կարեւոր պաշար մը գտեաւ հաներ է, որուն մէջ կը գտնուին բազմաթիւ թնդանօթներ։

—Չինական ջուրերու Ռուսական նաւատորմիղը աւելի պիտի ղօրեղանայ այն նաւաբաժինով, որ Կաղանդի կամ Ծննդեան տօներուն, պիտի մեկնի դէպի Չինաստան։ Ասկէ զատ, երկու զրահաւոր, չորս թորպիլանաւ, և երկու պահականաւ ալ յունվարի վերջը Չինական ջուրերը պիտի հասնին։

—Եւրոպական թերթերը հրատարակեցին այս օրերս Անգլիոյ և Գերմանիոյ միջև Չինական խնդրոյն մասին գոյացած համաձայնութեան պայմանագրին պատճէնը։ Այդ համաձայնութիւնը չորս գլխաւոր կէտերու մէջ կը կայանայ։

Երկու պետութիւնները կը յայտարարեն թէ՝ ցանկալով իրենց շահերն ու իրաւունքները եղածին պէս պահպանել Չինաստանի մէջ, իրենց բռնելիք փոխադարձ քաղաքականութեան մէջ հետևեալ սկզբունքները իրագործելու համաձայնած են.

1. Ծովին և գետերուն վրայ գտնուած նաւահանգիստները բաց պիտի մնան ամէն ազգի վաճառականութեան համար, և իրենք յանձն կառնեն պահել այս ազատութիւնը ամբողջ չինական հողին վրայ, որքան հեռու որ հասնի իրենց ազդեցութիւնը.

2. Անգլիա և Գերմանիա երբեք չի պիտի փորձեն ներկայ խառնակութիւններէն օգտուիլ, զանազան հողայրն առաւելութիւններ ձեռք ձգելու համար, և պիտի չանան Չինաստանը ներկայ վիճակին մէջ պահել։

3. Եթէ ուրիշ պետութիւն մը փորձեր ընէ ներկայ խառնակութիւններէն օգտուելու, երկու համաձայնող կողմերը իրենց կը վերապահեն կանխաւ համաձայնութեան մը գալ իրենց շահերը պաշտպանելու միջոցներու մասին։

4. Երկու կառավարութիւնները այս համաձայնութիւնը պիտի հաղորդեն միւս տէրութեանց, և ի մասնաւորի Աւստրօ-Հունգարիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, Ճաբոնի, Ռուսիոյ և Միացեալ Նահանգներու։

Այս պայմանագիրը, սակայն ֆրանսերէն լեզուով գրուած չէ, ինչ որ առհասարակ դիւանագիտական յարաբերութեանց մէջ, պաշտօնապէս ընդունուած է։ Ու այս պատճառաւ Անգլիական ու Գերմանական բնագրերը իրարմէ բոլորովին կը տարբերին կարգ մը նրբութեանց մէջ, և այլ և այլ դիւրիմացութեանց տեղի տուած են։

Բնագրերուն այս անորոշ հանգամանքէն օգտուելով՝ Ֆրանսա, Ռուսիա և Մ. Նահանգները իրենց գործին եկած կերպով մեկնած ու պատասխանած են Անգլօ-Գերման համաձայնութեան, և յայտնած են թէ, իրենց ալ փափաքներուն կը համապատասխանեն նաւահանգիստներուն ազատ մնալը, Չինաստանի «Սթագիւ գուօ»ին պահպանումը, իսկ երրորդ կէտին մէջ, պարագաներէն կախում պիտի ունենայ իրենց բռնելիք ընթացքը։

ԹՐԱՆՍՎԱԼ

Ժէնէրալ Քլէման ծանր յարձակում մը կրած է։ Լորտ Քիշնէր, որ սովորութիւն ունի դրժբախտութիւնները մեղմացնելու համար միշտ մաս առ մաս հաղորդել, կը հեռագրէ թէ Քլէման ետ քաշուած է ահագին քանակութեամբ ռակմամթերք կորսնցնելով։

—Պօէր երեսփոխանական մը մը յայտնած է թէ Ժուպէրի որդին սպաննուած է և պօէրները բաւական մնծկակ կորուստ տուած են։

Քլէմանի կորուստն է 5 սպայ սպաննուած, 18 վիրաւորեալ 9 մարդ սպաննուած և 555 վիրաւորուած։

Իսկ Տրվէթ յաջողած է անգամ մը ալ խոյս տալ թշնամւոյն յետապնդումէն և Օռանժ անցնիլ։ Այս դէպքերէն կը յայտնուի թէ պատերազմը երբէք վերջ գտած չէ, և Բրէթորիայէն քանի մը բարսախ անդին, արդէն երկիրը անապահովութեան մէջ կը գտնուի։

—Տրվէթ 2—3 հազար պօէրներով նորէն երեւցած է Դասպանքուի մէջ և երեք սաստիկ յարձակումներ ըրած է Անգլիական զօրքերու վրայ։

Երրորդ յարձակման մէջ ինքնանձամբ առաջնորդած է զօրքերը թշնամւոյն բանակը ճեղքելով։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Սուրբ Փրկչի Ազգային Հիւանդանոցի պատուարժան Հոգաբարձութիւնը Պուլկարիոյ մէջ սպառելու համար, ի նպաստ այդ բազմակարօտ հաստատութեան հրապարակ հանուած եւ մասնաւոր խնամքով պատրաստուած առաջին տեսակ սիկարի թղթէն հոսղրկած ըլլալով, կը խնդրուի յարգոյ հասարակութենէն որ նախապատուութիւնն տայ այս թղթին, թէ անոր ընծայած առաւելութիւններուն համար եւ թէ նպաստած ըլլալու համար հարիւրաւոր խեղճերու հոգատարութեան դժուարին եւ բազմապահանջ գործին։

Դիմել Տիար Պիպերեանի վաճառատունը, միակ կեդրոնատեղի Պուլկարիոյ համար, Տիպէք չէշմէ։

Կը գտնուի նաեւ Գաղիական զանազան տեսակ սիկարի թղթեր դիւրամատչելի գներով։ Դուրսէն եկած յանձնարարութիւնք փութով եւ խնամքով կը կատարուին կանխիկ վճառմամբ։

ԹԱՏՐՈՆ „ՍԱՆԹՐԱԼ“

«Նովա Զվեզտա» հայ դերասանական խումբը այս գիշեր դեկտ. 9 ժամը 8 կէսին պիտի ներկայացնէ «Վհուկը» կատակախաղ 4 արարուած և խիստ ծիծաղաշարժ զուեշտ մը։

Վաղը կիրակի գիշեր պիտի ներկայացնեն «Սէր առանց հարման» թատերախաղ 5 արար։

* * *

Միջնարարներու ատեն իտալական երգեցիկ խումբը երգեր ու պարեր պիտի յօրինեն։

ՉՈՒԼԱՐԱՆ „ԿՈՒԹԷՆԳԷՐԿ“

(Տպագրական տառերու)

Կարծր մետաղ · Ոչդիղ կարգ
Հաւասար բարձրութիւն

Ամէն լեզուէ տպագրական տառեր և զանազանք՝ գոհացուցիչ գներով։

Հասցէ՝

Fonderie tipographique ,Gutenberg, Sophia , Rue Graff Jgnatieff № 3 ,

20—25

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՇԱՐԺՈՒՄ“ի

——

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ

Печатница Хр. Н. Войниковъ—Варна